

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

**ՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ԱՐՏԱՅՈՒՈՂ
ՄԻ ԲԱՌԱԽՄԲԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ՆԱՅԱՔԱՂԱՔ, ՆԱՅԱՎԱՆ, ՆԱՅԱԳՅՈՒՂ, ՆԱՅԱԹԱՂ, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ)**

Նայոց լեզուն, ինչպես աշխարհի այլ լեզուներ, յուրահատուկ մի կուրակիչ է: Այն հազարամյակների ընթացքում ամբարել է հայ ժողովրդի աշխարհընկալումն ու կենսավորձը: Նայերենի բառապաշարում (նաև դարձվածաբանության մեջ եւ պարկերավորման համակարգում) արտացոլված են հայոց պարմության բազում իրողություններ, հայ ժողովրդի կենցաղը, սովորույթներն ու ավանդույթները, հավարալիքները, հարաբերություններն այլ ժողովուրդների հետ (հարկապես նրանց, որոնցից բառային փոխառություններ են կարարվել):

Նայերեն բառերն արդյոք արտացոլո՞ւմ են պարմական այնպիսի իրողություններ, որոնք բնութագրական են հայոց պարմության համար, բառային միավորներում ինչպե՞ս է արտահայտվում հայ ժողովրդի պարմական ճակատագիրը: Այս հարցերի պարասխանները կփորձենք փայլ իմաստային-բառակազմական մի բառախմբի միջոցով (ուրիշ բառախմբերի կանդրադառնանք այլ առիթով):

Առանձնացրել ենք ոչ բազմանդամ (բաղկացած է ընդամենը 5 միավորից), սակայն խիստ հեղաթրքրական մի բառախումբ: Այդ խմբում ընդգրկել ենք այն բառերը, որոնք կազմվել են «հայ + բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարով: Դրանք են՝ ՆԱՅԱՔԱՂԱՔ, ՆԱՅԱՎԱՆ, ՆԱՅԱԳՅՈՒՂ, ՆԱՅԱԹԱՂ, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ: Քննենք այդ բառերը՝ նշելով իմաստային ընդհանրություններն ու առանձնահատկությունները, ըստ անհրաժեշտության անդրադառնալով դրանց սրեղծման ժամանակին եւ ցույց փայլվ բառիմաստի (բառի արտահայտած հասկացության) եւ իրականության (նշանակիչ-նշանակյալի) հարաբերակցությունը, այդ բառերի գործառական արժեքը:

Ներագուրվող բառերն առնչվում են հայոց պարմության նշանակալի իրություններին՝ հայոց արքայազային¹ (նաև բռնագաղթին) և հայկական գաղթավայրերին, մի շարք դեպքերում՝ նաև ցեղասպանությանը: Նայերն օտար հողի վրա համախմբված են ապրել. դարերի ընթացքում հիմնել են բազմաթիվ գաղթավայրեր, անգամ զուր հայ բնակչությանը քաղաքներ, ավաններ, գյուղեր, թաղամասեր: Եւ դա իր արքայացույուն է գրել բառապաշարում:

Անդրադառնալով մեզ հերաքրքրող բառերին:

Ժամանակագրական առումով առաջինը ՀԱՅԱՔԱՂԱՔ բառն է (ԺԸ. դարի սկզբներ): Սպ. Մալխասյանցի բառարանը բառը բացատրում է որպես «հայի քաղաք, զուր հայ բնակչությանը քաղաք»²: Բառիմաստն առաջին հայացքից պարմական փեղեկություն, պարմականության ինչ-ինչ ազդակներ, թվում է, չի հաղորդում: Իրականում ի՞նչ են ցույց տալիս պարմական և լեզվական փաստերը:

Նայաքաղաք կոչվել են օտար երկրներում հայերի հիմնադրած և բացառապես հայ բնակչություն ունեցող քաղաքները: Այս հասկացության առաջացումը կապվում է Տրանսիլվանիայի³ հայ գաղթօջախի պարմության հետ:

ԺԸ. դարասկզբին Տրանսիլվանիայի հայության կյանքի նշանակալից երևույթը երկրով մեկ ցրված հայ գաղթականների (հայերի ընդհանուր թիվն այդ ժամանակ հասնում էր շուրջ 15-20 հազարի) կենտրոնացումն էր նորաստեղծ քաղաքներում: Նայաքաղաքները զուր հայկական կենտրոններ էին, ինքնավար համայնքներ⁴, որտեղ օտարների բնակությունն արգելված էր կայսերական հրովարդակներով, միայն օտարազգի առևտրականները կարող էին ժամանակավորապես մուրք գործել, այն էլ քաղաքային վարչության արտոնագրով:

Պարմականորեն առաջինը **Նայաքաղաք** է կոչվել 1700 թ. Տրանսիլվանիայում հիմնադրված Գեռլա քաղաքը (այժմյան Ռումինիայի փարածքում՝ երկրի հյուսիսում, Սոմեշ գետի ափին): Ահա նորակազմ փեղանվան առաջին հայտնի

1 Երկիրը ջլաբող երևույթը՝ արքայազայթը, որ պայմանավորված էր փնտրական, կրոնական, ազգային և քաղաքական մի շարք գործոններով, կարծես դարձել է հայոց պարմության կարևոր բնութագրիչներից մեկը:

2 Սպ. Մալխասյանց, Նայերեն բացատրական բառարան, հր. 3, Երևան, 1944, էջ 37: Մեր կարծիքով բառն առաջին անգամ այսպիսով է արձանագրվել:

3 Տրանսիլվանիան անցյալում փարբեր պետությունների սահմանների մեջ է եղել: Նունգարական Սրբափանոս թագավորի ժամանակից (1001-1038) մինչև 1526-ը Նունգարիայի մասն է կազմել, 1526-1848 թթ. ինքնավար պետություն է եղել, 1848-1921-ը նորից կցվել է Նունգարիային, 1921-ին Տրիանոնի խաղաղության դաշինքով հանձնվել է Ռումինիային (Ա. Գ. Աբրահամյան, Նամառուր ուրվագիծ հայ գաղթավայրերի պարմության, Ա., Երևան, 1964, էջ 350):

4 Տե՛ս Ս. Է. Քոլանջյան, Նունգարիայի և Տրանսիլվանիայի գաղթօջախները. «Նայ ժողովրդի պարմություն», հր. IV, Երևան, 1972, էջ 389:

ամենավաղ բնագրային գործածությունները՝ «Իբրև զամս երիս յամեցեալ վասն ընդունելոյ զրրիվիլէկոս ի կայսրէն հասարարելոյ զազարութիւն նորաշէն քաղաքին Շամուշուվարի (Գեղա), որ այժմ **Նայսրադաք** կոչի: Կարլոս կայսրն.... շնորհեաց զրրիվիլէկոս եւ զիշխանութիւն, որ էր Շամուշուվար, փոխեալ կոչեաց **Նայսրադաք Armenopolis**»⁵ (Սպեփանոս վրդ. Ռոշքա, 1670-1739): Ակնհայտ է, որ **Նայսրադաք**-ն այսօրեղ հայրով անվան արժեք ունի:

Քաղաքանվան այլալեզու համարժեքները՝ հուն. (լատ.) Armenopolis, որը պաշտոնական անունն էր, գերմ. Armenierstadt, հունգ. Szamosújvár (Սամոշուվար) կամ Örményváros (Էորմենիվարոշ), հիմք են փալիս վստահաբար խոսելու պարզեման մասին (հմմտ. **քադաք** վերջնաբաղադրիչով հայ. **մայրաքադաք** - հին հուն. μητρόπολις):

Նորակազմությունը հարազատ է հայերենի բառակազմական օրինաչափություններին: Ուշագրավ է բնագրային այս օրինակը, որտեղ նույն խոսքաշարում հանդես են գալիս **հայ քադաք** բառակապակցությունը եւ **հայսրադաք** բառը. «Էլեւնորա կայսրուհին նուիրեց իրեն եպիսկոպոսական փառաւոր զգեստներ, քուռա **հայ քադաքին** հիմնարկութեան հրամանը: Սաքսոններու նեղութեան պարճառաւ՝ Վրգարեան արդէն իր աթոռը Պիսարիցէն Կեօրկէն գիւղ փոխադրել էր, երբ **հայսրադաքին** հիմնարկութեան հրամանն սրացաւ»⁶:

Նորակառույց քաղաքում հոծ հայություն է հասարակվել 1672-ին, երբ Մոլդովայից բազմաթիվ հայ գաղթականներ են եկել Տրանսիլվանիա (պեղի իշխան Միքայել Բ. Ապաֆիի հրավերով): Քաղաք է դարձել ԺԸ. դարում: Քաղաքի կառուցման նախագիծը կազմել է հայ Ալեքսա ճարտարապետը, առաջին քարը դրել է Վրգարյան եպիսկոպոսը: Քաղաքի պարմությունից հեղաբրբրական է այս փաստը. 1726-ին Ավստրիայի Կառլոս Դ. կայսեր հրովարտակով հայերն իրավունք են սրացել Գեղայում բնակվելու (այլազգիների բնակությունը, ինչպես վերելում ասվեց, արգելվում էր), առանց մաքսի առևտուր անելու, դարավոր (նա քաղաքապետն էր) ունենալու եւ խորհրդականներ («ծերեր») ընտրելու⁷: Նենց այս ժամանակ էլ իրականացվել է քաղաքի անվանափոխությունը, եւ

5 Ն. Պողոսյան, Նորահայր բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Երևան, 2014, էջ 115-116:

6 Նր. Աճառյան, Նայ գաղթականության պարմություն, Երևան, 2002, էջ 179:

7 Տե՛ս «Նայկական սովերական հանրագիտարան», հրդ. 3, Երևան, 1977, էջ 17 (այսուհետ՝ ՆՄՆ):

մուր մեկուկես դար քաղաքը կոչվել է *Արմենուպոլիս / Նայսքադաք*⁸: ԺԹ. դ. սկզբին Նայսքադաքում հայերի թիվը 6000 էր⁹:

Քաղաքի անունը (բառը) փոխաբար գործածական է եղել: Ահա, օրինակ, Գրիգոր վրդ. Գովրիկյանի «Դրանսիրուանիոյ Նայոց մեքրապոլիսը կամ նկարագիր Կերլա»¹⁰ Նայսքադաքի ի գիր եւ ի պարկերս» գրքի մասերի վերնագրեր եւ ենթավերնագրեր՝ «*Նայսքադաքին* անցեալը», «Հոռմէական գաղթականութիւն *Նայսքադաքին* շրջակայքը», «*Նայսքադաքին* հիմնարկութիւնը», «Հապսպուրկեան-լոթարինկեան փան կայսրներն եւ *Նայսքադաքի* ազգայինը», «*Նայսքադաքին* առաջին ընտրեալ խորհրդարանը», «*Նայսքադաքի* մաշկագործաց եղբայրութիւնը», «*Նայսքադքին*»¹¹ երեսելիները»¹² եւ այլն:

Գրքում այս անունը հանդիպում է նաեւ փոքրապատճով գրությամբ՝ «Շար մեծ մարդիկ ընծայեց Կերլոթեան Կերլա *հայսքադաքը*»¹³: Նսրակ է, որ քաղաքի նախկին անվան զուգադրությամբ գործածվելիս *հայսքադաքը* դառնում է մասնավորող բաղադրիչ: Այսպես սկիզբ է առնում հայրուկ անունից բացի նաեւ հասարակ անվան արժեք ձեռք բերելու գործընթացը:

Նայսքադաքը դադարել է իբրեւ իրողություն գոյություն ունենալուց, այլ մնացել է որպես պարմական իրողություն: Սակայն «հայաքաղաք» հասկացությունը եւ բառը շարունակեցին իրենց ընթացքը:

«Նայսքադաք» հասկացության ձևավորմանը զուգընթաց՝ «ծնվեց» հաջորդ հայաքաղաքը: Հիմնական անվանը զուգահեռ՝ *Նայսքադաք/հայսքադաք* է կոչվել նաեւ Եղիսաբեթուպոլիս քաղաքը¹⁴ (նախկինում՝ Բաշդեֆալով, այժմ՝ Դումբրըվեն, կրկին Ռումինիայում):

ԺԸ. դ. Տրանսիլվանիայում կենտրոնացած մեծաթիվ հայերի մի մասը Եղիսաբեթուպոլիսում հաստատվել է 1658-ից՝ գաղթելով Մոլդովայից, զանգվածաբար՝ 1672-ից: Նայերը դիմում են Կառլոս Դ. կայսրին եւ խնդրում թույլատրել

8 Բառի «կենսագրության» համար կարելուք են այս գրքի վերնագիրն ու թվականը՝ «Քրիստոնէական վարդապետութիւն կարճառօք՝ վասն շահապետութեանց մանկանց Դրանսիրուանիոյ հայաքաղաքի» (Թրիեստ, 1798):

9 Այժմ Գերլայում մնացել են սակավաթիվ հունգարախոս հայեր:

10 Քաղաքանունը գրության զուգաձեռնություն ունի՝ արեւմտ. *Կերլա*, արեւել. *Գերլա*:

11 Երբեմն նկարվում է *քադաք* բաղադրիչի *ա*-ի սղում:

12 Ն. Գրիգոր վրդ. Գովրիկյան, Դրանսիրուանիոյ Նայոց մեքրապոլիսը կամ նկարագիր Կերլա Նայսքադաքի ի գիր եւ ի պարկերս, Վիեննա, 1896, էջ 5, 10, 16, 19, 21, 116: Ահավասիկ նույն հեղինակի մեկ այլ աշխատությունը՝ «Նայ արձանք կամ յիշարակարաններ հին եւ նոր Եղիսաբեթուպոլսոյ հայաքաղաքէն» (Վիեննա, 1904):

13 Ն. Գրիգոր վրդ. Գովրիկյան, նշվ. աշխ., էջ 15:

14 Նման. Ն. Գրիգոր վրդ. Գովրիկյան, Նայ արձանք կամ յիշարակարաններ հին եւ նոր Եղիսաբեթուպոլսոյ հայաքաղաքէն, Վիեննա, 1904:

Եղիսաբեթուպոլիսը դարձնել հայկական ազատ քաղաք¹⁵: 1733-ի օգոստոսի 11-ի կայսերական հրովարտական հայերին թույլատրվում է սրելոձել հայկական երկրորդ խոշոր կենտրոնը Տրանսիլվանիայում: Ըստ այդ հրովարտական հայերին են տրվել Եղիսաբեթուպոլիսը¹⁶ և շրջակա դաշտավայրը, քաղաքին շնորհվել է ինքնավարություն: Քաղաքի ողջ իշխանությունը հանձնվել է հայերին, որոնք իրավունք ունեին ընտրելու իրենց քաղաքի դատավորին, 12 խորհրդականներին և դատարանի քարտուղարին: Եղիսաբեթուպոլիսի սկզբնավորումից մինչև 1916 թ. ընտրված 61 քաղաքապետները հայեր են եղել¹⁷: Այս հայաքաղաքում պաշտոնական գրագրությունը թեպետ հայերեն չէր, սակայն խոսակցական լեզուն հայերենն էր (Առփալի բարբառ), այլ լեզուների հետ դպրոցում նաև հայոց լեզու է ուսուցանվել¹⁸:

Ժամանակի ընթացքում բառիմաստի ընդլայնման հետևանքով փոփոխվել է ունենում ներկարգային անցում, և **հայաքաղաք**-ը հստակորեն ընկալվում է իբրև հասարակ անուն: Այսպես: Պատմությունից հայտնի է, որ 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Թուրքիայից, Բուլղարիայից և Ռումինիայից բազմաթիվ հայեր 1790-ին գաղթել են Մոլդովա և հաստատվել Ննչեշտր, Լահովիշտովա, Սրելնիչ և ուրիշ գյուղ-կավածքներում, որոնք 1816-ին գնել է Մանուկ-Բեյ Միրզայանը: Նա ծրագրում էր Ննչեշտրում կառուցել «Ալեքսանդրապոլ» **հայաքաղաք**¹⁹ (ընդգծումը՝ Դ. Գ.): Հայտնի է, որ դարի կեսերին Ննչեշտր քաղաք է դարձել և Բեսարաբիայի նշանակալից հայկական կենտրոն, սակայն հայաքաղաքի ծրագիրն իրականություն չի դառնում (1867-ին այստեղ ապրում էր ընդամենը 430 հայ):

Նայաքաղաք հասկացության առաջացումը և բառային միավորի (թե՛ հատուկ և թե՛ հասարակ անվան արժեքներով) ցարդ դիտարկված բոլոր դեպքերը վերաբերում էին առավելաբար ԺԸ. դարին, ավելի քիչ՝ նաև ԺԹ.-ի սկզբներին և նույն փարածաշրջանին: Եթե այսքանով սահմանափակվեր, ապա կարող էինք խոսել նրանց միայն պարմական արժեքի և փարածական ու ժամանա-

15 Տե՛ս **Ա. Գ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 355:

16 Նորաշեն քաղաքում, ինչպես ընդունված էր հայաքաղաքների պարագայում, ըստ կայսեր հրովարտական՝ ապրելու իրավունք են ստացել միայն հայերը, իսկ օտարազգիները պետք է դուրս հանվեին այնտեղից: Հայերն ազատվել են բոլոր փեսակի փութերից և պետական ծառայություններ կատարելու պարտականություններից: 1787-ին քաղաքն ունեցել է 2100, 1808-ին՝ 2300 բնակիչ, ապա հայերի թիվն աստիճանաբար նվազել է: Այժմ նրանք քաղաքում ներկայություն չունեն, որ նշանակում է, թե երկրորդ հայաքաղաքն արժանացել է նախորդի բախտին:

17 Տե՛ս **Ա. Գ. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 356:

18 Տե՛ս **Ն. Գրիգոր վրդ. Գովրիկեան**, Նայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլվանիոյ, Վիեննա, 1893, էջ 57, ՆՄՆ, հր. 3, էջ 507-508:

19 Տե՛ս ՆՄՆ, հր. 5, Երևան, 1979, էջ 640:

կային սահմանափակվածության մասին: Այնինչ, բառի կիրառության և բառի-մասրի փոփոխության հետագա ընթացքը նոր իրողություններ է ի հայտ բերում:

Բառակազմական իմաստաբանության տեսանկյունից ուշագրավ է քննարկվող բառի հետևյալ գործածությունը:

Լվովի տարածաշրջանի Յագլովեց քաղաքում (այժմ Ուկրաինայի Տեռնոպոլի մարզի Յաբլունովկա գյուղն է) հայերը հաստատվել են ամենայն հավանականությամբ Կաֆայի (Ղրիմի այժմյան Թեոդոսիա քաղաքն է) անկումից՝ 1475 թվականից հետո, ըստ այլ տեսակետի՝ ԺՋ. դ. 40-ականներին²⁰: Հայերն ունեցել են ինքնավարություն, սեփական օրենքներով ղեկավարվելու արտոնություն: Նրանք ունեին իրենց վոյքը՝ ավագը, 1615-ից՝ դավարան, 40 հոգանոց կոլեգիա, 3 եղբայրություն, դպրոց: Հայերի թաղամասն ունեցել է քաղաքապետարանի շենք, շուկա, եկեղեցի: Հայկական թաղամասը կոչվել է **Տայաքաղաք**²¹: Այս բնակավայրում հայերի մասին վերջին վկայությունը 1807-ին է եղել:

Այսինքն՝ Յագլովեցի դեպքում բառի **քաղաք** բաղադրիչը նշանակել է ոչ թե ամբողջը, այլ նրա մի մասը՝ «թաղամաս», «քաղաքամաս»: Սա բառի իմաստային կառուցվածքում տեղի ունեցած ուշագրավ մի փոփոխություն է:

Նոր ժամանակներում, ինչպես և մեր օրերում, **հայաքաղաք** -ը գործածվում է արդեն հասարակ անվան արժեքով, եթե չհաշվենք Գեղային, մասամբ նաև Եղիսաբեթուպոլիսին կամ Յագլովեցին վերաբերող համատեքստերը: Բնականաբար, **հայաքաղաք** բառի պարամության նոր շրջանում եւս այն շարունակում է գործածվել ամբողջովին հայ բնակչություն ունեցող և օտար երկրներում գտնվող քաղաքային բնակավայրերի առնչությամբ:

Տայաքաղաք բառով հաճախ բնորոշվում է Իրանի Նոր Ջուղան: Օրինակ՝ «Անցնող տարիների ընթացքում, որտեղ էլ որ գտնուեմ, առհասարակ իրանահայությունը և ի մասնաւորի երբեմնի շէն **հայաքաղաք** Ջուղան մաս են կազմել իմ Էութեան» (Կորյուն արք. Պապյան, «Ալիք» օրաթերթ, 15.12.2013, Թեհրան), «Լ. Գ. Մինասեան նշանաւոր բանասէրի, հասարակական, կրթական և ազգային գործչի նկարագիրը կոփուել ու ամրացել է... Նոր Ջուղա **հայաքաղաքի** Կենտրոնական դպրոցի դասարաններում...» (Գ. Դավթյան, «Ասպարեզ», 10.01.2013, Լոս Անջելես):

1604-1605-ին՝ պարսից շահ Աբաս Ա.-ի կազմակերպած մեծ բռնագաղթի ժամանակ, Արեւելյան Հայաստանից, ինչպես նաև Արեւմտյան Հայաստանի տարբեր շրջաններից տեղահանվեց և Իրան տեղափոխվեց 300 հազարից ավել-

20 Տէն Վ. Ռ. **Գրիգորյան**, Յագլովեց քաղաքի հայկական գաղութի «Կորիճավորաց եղբայրության» կանոնադրությունը. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, հր. 9, էջ 42:

21 Տէն ՄՄՄ, հր. 8, Երևան, 1982, էջ 104 (**Յաբլունովկա** բառահոլովածը):

լի հայ, րեղ հասավ 150-200 հազարը: Բռնագաղթված հայերը հաստատվեցին մայրաքաղաք Սպահանում և շրջակա գյուղերում, ուրիշ քաղաքներում: Նայասպանի շեն և հարուստ Ջուղա քաղաքի բնակիչները Սպահանի մերձակայքում հիմնադրեցին Նոր Ջուղան²², որն ուներ ինքնավարություն, հայ քաղաքապետ (քալանթար) և ոստիկանապետ. ջուղայեցիները մի տեսակ հանրապետություն էին վայելում²³: Նայերն օգտվում էին շահի շնորհած արտոնություններից: Նայական ծաղկուն քաղաքն ապրել է ազգային լիարժեք կյանքով, ժամանակին նույնիսկ ազդել հայաստանյան քաղաքական-գաղափարական, հոգեոք-մշակութային և գիտական կյանքի վրա²⁴:

Ակնհայտ է, որ իբրև հայկական քաղաք՝ հայաքաղաք, Նոր Ջուղան ավելի վաղ է առաջացել, քան Գեղա-Արմենոպոլիս-Նայաքաղաքը, սակայն **հայաքաղաք** բառը նրա կապակցությամբ գործածվել է շատ ավելի ուշ՝ նոր և նորագույն ժամանակներում: Ինչո՞ւ: Քանի որ հայաքաղաքն իբրև հասկացություն տրակավին չէր ձևավորվել, իսկ համապարասխան բառը, բնականաբար, չէր սրելով:

Նայաքաղաք բառը գործածված ենք տեսնում հայաբնակ եւս մեկ քաղաքային բնակավայրի առնչությամբ:

Ի. դարում՝ 1915 թ. Մեծ եղեռնից հետո, Արեւմտյան Նայասպանից գաղթած հազարավոր հայ գաղթականներ հանգրվանեցին հյուրընկալ Լիբանանում: Շուրջ ութսու բնակավայր ձևավորվեց Բուրջ Նամուղը (արեւմ.՝ Պուրճ Նամուր), որն սկզբնապես մայրաքաղաք Բեյրութի արեւելյան արվարձաններից էր: Ամբողջությամբ հայաբնակ լինելով՝ հայկական լիարժեք կյանքով է ապրել (և ապրում է): Մայրաքաղաքի ընդարձակման հետեւանքով հայաբնակ բնակավայրն այժմ մտել է Մեծ Բեյրութի շրջագծի մեջ: Բուրջ Նամուղն ունի տեղական ինքնակառավարման մարմիններ, հայ քաղաքապետ, 16 թաղապետներ: Քաղաքամասը մամուլի լեզվում, հրապարակախոսության մեջ երբեմն բնութագրվում է **հայաքաղաք** բառով: Օրինակ՝ «10 և 11 յուլիս 1961-ի թիւերով

22 Տե՛ս **Յ. Թ. Տէր Յովհաննէան**, Պարմութիւն Նոր Ջուղայի (Սպահան), Նոր Ջուղա, 2004: Այսօր գոյւր հայ բնակչոյթամբ քաղաքը ձուլվել է Սպահանին, անընդհար արտագաղթի պարճառով հայ բնակչոյթոնը խիստ նվազել է, սակայն Նոր Ջուղան իր դպրոցների, եկեղեցիների և բացառապես հայախոս բնակչոյթան շնորհիվ տակավին պահպանում է հայկական դիմագիծը:

23 Տե՛ս **Նր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 222:

24 Կար ժամանակ, երբ այս քաղաքում էր որոշվում, թե ով պետք է նստեր Լուսավորչի գահին: Նորջուղայեցի են, օրինակ, Նակոբ Դ. Ջուղայեցի (1655-1680) և Աղեքսանդր Ա. Ջուղայեցի (1706-1714). տե՛ս «Ամենայն Նայոց կաթօիկոսներ» հանրագիտարան, Ս. Էջմիածին, 2008:

և «Պուրճ Համուր փիպար **հայաքաղաքը**» խորագիրով թղթակցություններով «Ազդակ» կը գրեր...» («Ազդակ» օրաթերթ, 27.11.2013. Բեյրութ):

Տայաքաղաք բառի նման կիրառությունները, անշուշտ, փարբեր են ԺՀ. դառնում ծնունդ առած **հայաքաղաք**-ի նշանակությունից և գործածությունից, բանի որ էապես փարբեր են հայաքաղաքի ԺՀ. դարի և այժմյան ընկալումները: Ակներես է, որ այս դեպքում մեզ հեղափոխող բառն ուղղակի նշանակում է «հայաքանակ»: Միաժամանակ քաղաքի ընկալումն է փարբեր (Բուրջ Համուդն այժմ ավելի շուր պարզապես թաղամաս է ընկալվում):

Արեւմտահայերենում առկա բազմաթիվ գործածությունների պարագայում զարմանալի է, որ **հայաքաղաք**-ն առ այսօր արձանագրված չէ արեւմտահայերենի բացառական հին և նոր ընդարձակ բառարաններում: Առհասարակ «հայ + բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարով կազմված բառերը դրանցում արձանագրված չեն, մի իրողություն, որ բառարանագրական ակնհայտ բացի վկայություն է: Հափկապես որ քննարկվող բառախումբը մեծապես առնչվում է արեւմտահայոց պարամական ընթացքին, անցյալ և ներկա կյանքին:

Անդրադառնալն այն դեպքերին, երբ հայկական քաղաք իրականության, «հայաքաղաք» հասկացության և նրա հաղորդիչ **հայաքաղաք** բառի միջև խզում կամ բացակայություն է նկատվում: Այսինքն՝ բառի ակնկալվող գործածություն չունենք կամ գրեթե չունենք:

«Հայաքաղաք» հասկացությունը լիովին համապատասխանում է ԺՀ. դ. վերջին քառորդում Ռուսաստանի հարավում հիմնադրված հայկական քաղաքներին՝ Նոր Նախիջևանին և Գրիգորիտպոլիսին:

Նոր Նախիջևանը Ռուսաստանի առաջին հայկական քաղաքն է, ընդ որում ի սկզբանե կոչվել է հայկական անվանումով (սկզբնապես ուղղակի Նախիջևան): Այն 1779-ին Դոն գետի ափին հիմնադրել են Ղրիմից գաղթած հայերը (կարծիք կա, որ որոշ դեպքերում մարդիկ հարկադրաբար են գաղթել): Այդ ժամանակ Ղրիմից գաղթել է 12600 հայ, որոնցից փնդ է հասել մուրավորապես 8500-ը: Եկափերինա Բ. կայսրուհու 1779-ի նոյեմբերի 14-ի հրովարտակով հայերին մեծ արտոնություններ են փրկել. քաղաքի բնակչությունը 10 փարով ազատվել է հարկերից, իրավունք է ստացել ազատ առևտուր անելու Ռուսաստանում (և նրա սահմաններից դուրս), վերապահվել է դավանանքի ազատություն, մայրենի լեզվով դարավարության իրավունք (իրագործվել է Աստրախանի կամ «Հայոց դարաստանագրքով»): Ի դեմս հայկական մագիստրատի (կառավարման բարձրագույն մարմինն է)՝ գաղութն ստացել է ինքնավարություն: Նոր Նախիջևանը հայերի ձեռքով կառուցված և լիարժեք հայկական կյանքով ապրող բարեկարգ քաղաք էր: ԺՀ. դարավերջին կառուցվել են Ս. Խաչ վանքը, մի քանի եկեղեցիներ, հիմն-

վել են դպրոցներ, սկսել է գործել հայկական փայտանոց: Քաղաքը 1812-ին ուներ 8500, 1904-ին՝ 32 հազար հայ բնակիչ²⁵: Ի. դարում հայկական Նոր Նախիջևանը միացել է Դոնի Ռոսսիայով քաղաքին՝ դառնալով նրա շրջաններից մեկը:

Թվարկված մի շարք հայրականիչներով Նոր Նախիջևանը բավական նման է Տրանսիլվանիայի Գեուլա և Եդիսաբերդուպոլիս հայաքաղաքներին: Սակայն իհնչն է ուշագրավ: Նոր Նախիջևանի վերաբերմամբ **հայաքաղաք** բառը չի գործածվել անգամ այն ժամանակ, երբ քաղաքը գույր հայ բնակչություն ուներ և հայկական կյանքով էր ապրում: Ջարմանալի է, որ ինչպես գիւրական գրականության մեջ, այնպես և մամուլում այս քաղաքի առնչությամբ **հայաքաղաք** բառը չի գործածվել նաև հերագայում²⁶: Սա իհնչ է նշանակում: Արդյո՞ք «հայաքաղաք» հասկացությունը միայն ԺԸ. դ. սկզբներին ձևավորված հայաքաղաքներին է վերաբերում, թե՞ ռուսական միջավայրի և ազգայնական (հերագայում նաև խորհրդային) մրաժողության ճնշիչ ազդեցության հետևանք է²⁷:

Հայաքաղաքների մեջ հիշարակվում է նաև Գրիգորիոպոլիսը: Պարմագիւրական հիշարժան մի աշխարհության մեջ կարդում ենք. «Ռուսաստանի հայկական նոր գաղթօջախներից է հանդիսացել Գրիգորիոպոլիս հայաքաղաքը»²⁸: Ընդհանրապես նկարելի է, որ ռուսաստանյան հայկական (հայաբնակ)

25 Տե՛ս Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պարմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967. «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պարմություն (1861-1917 թթ.)», Երևան, 1985:

26 Տե՛ս, օրինակ, Վ. Բ. Բարխուդարյանի վերոհիշյալ աշխարհությունները: Դրանցից առաջինում կարդում ենք. «Տասնութերորդ դարի վերջին քառորդում ազաւրագրական ակնկալությունների աշխուժացման մթնոլորտում, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու «դաշնադրության» նախագծերի մշակման շրջանում Կովկասի նախադռներում **գույր հայաբնակ քաղաքի** (ընդգծումը՝ Դ. Գ.) և հինգ գյուղերի հիմնադրումը մեծ փալավորություն է գործում ժամանակի հայության վրա» (էջ 76): Այնպիսի է, որ ճիշտ **հայաքաղաք**-ի բառիմաստին է համապարասխանում, սակայն բառը չի գործածվում:

27 Գարբիել Պարկանյանը, օրինակ, 1879 թ. գրել է մի աշխարհություն, որ վերնագրել է այսպես՝ «Հարյուրամյակ Նոր Նախիջևան հայաբնակ քաղաքի» (անփոխ է): Նսրակ է, որ **հայաբնակ քաղաք** բառակապակցությունը գործածվել է «հայաքաղաք» իմաստով: Մյուս նշանավոր նոր-նախիջևանցիին՝ Ռափայել Պարկանյանը, գործածել է **հայ քաղաք** բառակապակցությունը (իհարկե, ոչ իր ծննդավայրի կապակցությամբ). «Առաջները ես կարծում էի թե՛ անհնար է միայն հայ ազգի քահանա և վարժապետ լինելը. այժմ պետքում եմ, որ հայ բժշկին **հայ քաղաքի** մեջ պաշտոն վարելն ևս դժվար է, եթե չասեմ անհնար է: Այդ ևս բավական չէ՝ մի հայ աշխարհավորի **հայ քաղաքի** մեջ յուր գիւրությունը մշակելն ևս դժվար է» (Ռ. Պարկանյան, Տիկին և նաժիշկ, Երկեր, Երևան, 1980, էջ 282): Իսկ հաջորդ պարբերության մեջ՝ «Երբ որ ես բժշկապետության հարցաբնությունս ավարտեցի, քանի քանի **հայաբնակ քաղաքների** գրեցի՝ չէիմ կամենալ արդյոք ինձ քաղաքական բժշկի պաշտոն փալ...» (անդ, էջ 283): Այններև է, որ **հայ** բաղադրիչն այսպեղ նշանակում է «հայաբնակ» կամ «հայաշար»:

28 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 378:

քաղաքների առնչությամբ **հայաքաղաք** բառը սովորաբար չի գործածվել, և սա արևելահայերեն գիրական խոսքում բառի նման կիրառության սակավաթիվ օրինակներից է: Հայրկապես խորհրդային փարիզների համար սա եզակի դեպքերից է:

Գրիգորիոպոլիսը նավահանգստային քաղաք է այժմյան Մոլդովայում՝ Դնեստրի գետի ձախ ափին, Տիրասպոլից 45 կմ հյուսիս-արևմուտք: 1787-1791 թթ. ռուս-թուրքական երկրորդ պատերազմից հետո Թուրքիայի փրկապետության փակ գտնվող Մոլդովայից ու Բեսարաբիայից շուրջ 4000 հայեր գաղթեցին և ժամանակավոր հաստատվեցին Դուբոսարի քաղաքում, նրանց փող հարկացվեց նոր քաղաք կառուցելու համար²⁹ (արդեն կային հայաշեն Գեոլայի, Եղիսաբեթոպոլիսի և Նոր Նախիջևանի նախօրինակները): Հայերը հիմնադրեցին Գրիգորիոպոլիս քաղաքը (հիմնարկերը կատարվել է 1792 թ. հունիսի 15-ին): 1794 թ. հոկտեմբերի 12-ին Եկատերինա կայսրուհու հրամանագրով Գրիգորիոպոլիսը ստացավ իր գինանշանը, կնիքը և քաղաքային մագիստրատի ներկայացուցչական հասարիքներ: Ընտրված առաջին քաղաքագլուխը հայ էր: Նորակառույց քաղաքը շուտով փոխառապես հզորացավ, կառուցվեցին եկեղեցիներ և այլն³⁰:

Ռուսաստանյան այլ օրինակ էլ կա: 1799-ին Դաղստանի Դերբենդից, Ղարաբաղից և այլ վայրերից եկած հայերը Նովոռոսիայում հիմնադրել են նաև Սուրբ Խաչ քաղաքը (այժմ Բուդյոնովսկ, Ստավրոպոլի երկրամասում, Ռուսաստան): Սրա համար էլ պարզապես ասում են «հայկական քաղաք», բայց ոչ երբեք հայաքաղաք: Մնում է ենթադրել, որ ռուսահայ ավանդույթի մեջ **հայաքաղաք**-ը գոյություն չունի:

Հայկական քաղաք է եղել Ղրիմի Սուրխաթը³¹: Ղրիմը Ռուսաստանին անցնելուց հետո Պավել Ա. կայսեր 1799-ի հոկտեմբերի 28-ի հրովարտակով լքված Սուրխաթը փրվել է հայերին՝ հավերժական օգտագործման: ԺԹ. դարասկզբին հայերը լքված վայրում քաղաք են հիմնել: Նրանք 10 փարի ազատվել են բոլոր

29 Հմմտ. **Ж. А. Анянян**, Основание города Григориополя. «Պարմա-բանասիրական հանդես», 1964, հր. 1, էջ 161-162:

30 1800-ականներին, երբ քաղաքի դերը նվազեց, հայերն սկսեցին հեռանալ Գրիգորիոպոլիսից՝ մեկնելով Օդեսա և Ռուսաստանի այլ քաղաքներ, մի մասը վերադարձավ Բեսարաբիա: Հիմնադրումից մեկ դար հետո հայերը քաղաքի ազգային կազմի մեջ չորրորդ փողն էին զբաղեցնում (ընդամենը 406 մարդ), իսկ այժմ քաղաքի շուրջ 10 հազար բնակիչների մեջ հայեր գրեթե չկան:

31 Հիմնադրվել է ԺԳ. դարում, և հենց այդ ժամանակից էլ հայերը բնակություն են հաստատել այնտեղ: Քաղաքի անունը հայերեն Սուրբ Խաչ անվան աղավաղված ջննովական ձևն է (հանգամանակից փոխ **Ք. Վրդ. Քուշներևան**, Պարմոնիս գաղթականության Խրիմու հայոց, Ս. Ղազար, 1895, էջ 106-111): Քաղաքը հայերն է նաև հայ. Հին Ղրիմ, թաթար. Էսկի Կրիմ, այժմ՝ ռուս. Старый Крым անուններով:

հարկերից ու փոքրներից, նրանց փրկել է առևտրով և արհեստներով զբաղվելու ազատություն, թույլատրվել է շինարարություն իրականացնել, հիմնել գործարաններ և այլն³²։ Կայսերական հրամանագրի հիման վրա հայերը կազմակերպել են դպարարան (կոչվել է Նին Ղրիմի քաղաքային ռաբոտա)։ Դպարարանն ունեցել է դպրական և ոստիկանական իրավունքներ, գործերը վարել հայոց լեզվով՝ հայկական օրենքներին և սովորույթներին համապատասխան³³։ Բաղաքային ռաբոտան սրանձնել է նաև գործադիր իշխանության իրավասություններ։ Նայ համայնքն ընտրել է քաղաքագլուխ և ավագ։ Մինչև 1870-ը հայերը կազմել են քաղաքի բնակչության մեծամասնությունը³⁴։

Փաստորեն հայաքաղաքներ ստեղծելու Տրանսիլվանիայի փորձը հաջողությամբ իր շարունակությունն է ունենում Ռուսական կայսրությունում։

Պարմագիրական ուշագրավ աշխատության մեջ այս քաղաքի վերաբերմամբ գործածվել է *հայաքաղաք* բառը. «*Նայաքաղաքի* ստեղծումն է, որ ազգային շունչ ու բնավորություն պիտի հաղորդեր հեղափոխությանը՝ թերակղզու վրա»³⁵։ Սա Սուրխաթի առնչությամբ բառի գործածության եզակի օրինակներից մեկն է։ Ուշադրություն պիտի դարձնել, որ մենագրությունը լույս է փնտել խորհրդային հասարակարգի փլուզումից անմիջապես առաջ՝ Արցախյան շարժման ժամանակ, երբ խորհրդային գաղափարախոսական մամլիքը զգալիորեն թուլացել էր։ *Նայաքաղաք* բառի գործածությունն արդարացված է, քանի որ Սուրխաթը համապատասխանում է «հայաքաղաք» հասկացությանը։

Բառի գործածության վերոհիշյալ և այլ դեպքեր հուշում են, որ կարող են հաղթահարվել ռուսաստանահաճ մրայնության կաշկանդումները։ Դիպարկենք հետևյալ կիրառությունները, որոնք նոր (ավելի ճիշտ՝ ազատ և ազգային) մրաժողության արգասիք են։ Այսպես, «Ղրիմը Ռուսաստանին անցնելուց հետո անմարդաբնակ դարձած Սուրխաթը... Պավել Ա.-ի 1799-ի հոկտեմբերի 28-ի հրամանագրով փրկվել է հայերին՝ հավերժական օգրագործման։ ԺԹ. դ. սկզբին նրանք այսօրեղ հիմնել են *հայաքաղաք*» («Նայ սփյուռք» հանրագիրարան, էջ 606). «...հայաթափեց Ղրիմը, փեղի հայությունը, որ հիմնականում Անիից էր

32 Տեն Վ. Ա. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 227-229։

33 Տեն Վ. Ա. Միքայելյան, Ղրիմահայոց պարմություն, Երևան, 1989, էջ 248-249։

34 ԺԹ. դարավերջին Սուրխաթի դերն ընկել է, Ի. դարասկզբին այնպեղ ընդամենը 400 հայ էր բնակվում։ Փաստացի ևս մեկ հայաքաղաք դադարում է գոյություն ունենալուց։

35 Վ. Ա. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 229։

գաղթել, արեղափոխվեց Նյուսիասյին Կովկաս եւ այնպեղ հիմնադրեց հինգ *հայաքաղաք*»³⁶ (Վ. Լոռնեց, www.blognews.am/arm/news/136687):

Նայաքաղաք բառը երբեմն գործածվում է հայաշար այլ քաղաքների առնչությամբ: Օրինակ՝ «Ներագա դարերում հայկական քաղաքը ավելի ուժեղացավ Տրապիզոնում եւ նույնիսկ օտարները նրան *«հայաքաղաք»* կոչեցին»³⁷: Կամ՝ *հայաքաղաք Թիֆլիս*: Սա բառի գործածությունն է ոչ իր բուն իմաստով («հայերի քաղաք, գուր հայ բնակչությամբ քաղաք»), այլ երկրորդական՝ նշանակելով «հայաբնակ կամ հայաշար քաղաք»: Նախապես է նաեւ փոխաբերական նշանակությամբ մեկնաբանել՝ «հայաշունչ»: Այս դեպքում փոխվում է բառի ոճական բնութագիրը: Արմենուպոլիսի (Գեղա), Եղիսաբերդուպոլիսի եւ այլ՝ ամբողջովին հայ բնակչություն ունեցող քաղաքների կապակցությամբ գործածվելիս բառը գիտական ոճին է պատկանում, որոշ համարներսերում այն անգամ արմենիային արժեք է ձեռք բերում, իսկ Թիֆլիսի պարագայում գործածվելիս, օրինակ, նրա ոճական արժեքը փոխվում է՝ դառնալով գեղարվեստական կամ (գիտա)հրապարակախոսական ոճերին բնորոշ միավոր:

Նկատելի է նոր ժամանակներին, ինչպես եւ մեր օրերին բնորոշ մի իրողություն, որին անհրաժեշտ է հարույկ անդրադառնալ: *Նայաքաղաք* բառը եւ արեւմտահայերենում, եւ արեւելահայերենում երբեմն գործածում են նաեւ բուն Նայասարանի՝ հայրենի քաղաքների կապակցությամբ՝ «հայկական՝ հայաստանյան քաղաք» նշանակությամբ: Մինչ այդ այս նշանակությամբ կիրառություն կարծես չի եղել: Օրինակ՝ «Բայց ահա հայ գրագէտ մը, որ գիրք կը գրէ, Վանի պարմութիւն մը կուտայ, ու զուարճացնելու համար իր ընթերցողները՝ զոգատոր կամ կորնթարդ հայելի մը կը բռնէ պարմական *հայաքաղաքին* դիմաց» («Յառաջ», Փարիզ, 01.12.1967). «Նուսանք, որ երբեւէ Վանը դարձյալ կդառնա *հայաքաղաք*» (Վ. Անթանեսյան, <http://archive.ankakh.com>). «Եղել է, եղել է աշխարհում Կարին հայաքաղաքը, ու այդ քաղաքում ծնվել է Արամը» (Գր. Զանիկյան, www.blog.mediamall.am):

³⁶ Ներաբրքի է նաեւ այս գործածությունը. «Իսկ ի՞նչ է սպասում Նայասարանին: Երկիրը կդառնա *հայաքաղաք*՝ արմենուպոլիս: Պարմության ընթացքում ունեցել ենք չորս այդպիսի արմենուպոլիս. Գեղյան ու Գրիգորիտապոլիսը վերածվել են երբեմնի հայության անտես սպիտակների, Նոր Նախիջեւանը՝ Դոնի Ռոստովի մի վարչական շրջանի, Նոր Զուղան՝ Մայանի թաղամասի: Նայասարանը կհայաթափվի ու կդառնա *հայաքաղաք*...» (Իս. Դադայան, www.irates.am): Սա միևնույն ժամանակ հուշում է, որ հայագիտության խնդիրներից է «հայաքաղաք» հասկացության հստակ սահմանումը եւ հայաքաղաքների որոշումը:

³⁷ Ն. Մ. Ղազարյան, Կոստանդնուպոլսի եւ Զմյուռնիայի գաղթօջախները. «Նայ ժողովրդի պարմություն», հր. IV, Երևան, 1972, էջ 312:

Սա փաստորեն իմաստային նոր (մեր կարծիքով ոչ խրախուսելի) դրսևորում է, բանի որ, կրկնում ենք, **հայաքաղաք** կոչվել են օտար երկրներում գտնվող հայկական քաղաքները: Բոլորովին կապ չունի այն հանգամանքը, որ հայոց այդ քաղաքներն այժմ օտար պետության սահմաններում են:

Մեր համոզմամբ **հայաքաղաք** բառը հայագիտական եզրի արժեք ունի: Հայկական բազմահատորյա («սովետական») հանրագիտարանում այն հանդիպում է տարբեր բառահոդվածներում. «Առանձնապես արժեքավոր էին Խ. Սոնկոբյանի՝ Գեղա հայաքաղաքի պարամոնյանը և Տրանսիլվանիայի հայերի ազգագրությանն ու փոհմանություններին նվիրված ուսումնասիրությունները» (հր. 2, էջ 94, «Արմենիա» բառահոդվածը): «Համալսարանի գրադարանում պահվում են Եղիսաբեթուպոլիս **հայաքաղաքից** 1911-ին փեղափոխված հայերեն ձեռագրերի ժողովածուն՝ բաղկացած 62 գրագրերից» (հր. 5, էջ 485, «Կլոմ-Նապոկա»): «Նովկոլ պարմում է ժողովրդական ապստամբությանը հայերի մասնակցության, պարությունից հետո 3 հազար հայ ընտանիքի Մոլդավիայից Տրանսիլվանիա գաղթելու (1672), այնպեղ **հայաքաղաքներ** և այլ կենտրոններ հիմնելու մասին» (հր. 6, էջ 46, «Հաժդեո»): «Հիմնվեցին Գեղա, Եղիսաբեթուպոլիս (այժմ՝ Դումբրովեն) **հայաքաղաքները**» (հր. 6, էջ 677, «Հայերը Հունգարիայում»): «Գրել է Հունգարիայի և համաշխարհային պարամոնյան վերաբերյալ աշխատություններ, Գեղային նվիրված «**Հայաքաղաքի** փեղագրությունը» (1871) մենագրությունը» (հր. 7, էջ 691, «Մոլնար»)³⁸: Սրանց կարող ենք ավելացնել գիտական աշխատություններում առկա մի շարք գործածություններ: Օրինակ՝ «**Հայաքաղաքները** ինքնավար համայնքներ էին, որ կառավարվում էին քաղաքային վարչություններով». «1757 թ. **հայաքաղաքներն** ունեցան նաև իրենց Հարյուրոց ժողովը կամ Սուրան»³⁹:

Գործ ունենք հայոց պարամոնյանն առնչվող խիստ ուշագրավ մի իրողության հետ, սակայն **հայաքաղաք** առանձին բառահոդված չկա ոչ վերոհիշյալ, ոչ էլ «Հայկական համառոր հանրագիտարանում»: Անհրաժեշտ է, որ **հայաքաղաք**-ը հարակորեն սահմանվելուց հետո առանձին բառահոդվածով ներկայացվի հայկական հանրագիտարաններում:

Ամենայն հավանականությամբ **հայաքաղաք** բառի համաբանությամբ է կազմվել ՎՃՅԱՎԱՆ՝ «հայկական՝ հայերի՝ հայաբնակ ավան՝ գյուղաքաղաք» նշանակությամբ բառը: Բառակազմության փեսանկյունից համեմատելի է **հայ**

38 Ի դեպ, **Հայաքաղաք/հայաքաղաք** բառն Արևելահայերենի կորպուսում՝ ԱՐԵՎԱԿ-ում (www.eanc.net), հանդիպում է 22 համալրերստում: Սա, ի դեպ, այնքան էլ բարձր ցուցանիշ չէ:

39 «Հայ ժողովրդի պարամոնյուն», հր. IV, Երևան, 1972, էջ 389:

ալֆան բառակապակցության հետ, ուստի չի բացառվում բաղադրիչների սուսկական կցումը⁴⁰:

Բառն սրելով էլ արևմտահայերենում, հավանաբար հերեդեռնյան շրջանում, երբ մասնավորապես Սիրիայի փարբեր շրջաններում հայկական ավաններն էլ գյուղեր ձևավորվեցին: Այժմ համահայերենյան գործածություն ունի, թեպետ հաճախական չէ: **Նայալֆան** բառը հայկապես գործածում են Մերձավոր Արևելքի հայկական երկու հայրենի գյուղաքաղաքների (ավանների) առնչությամբ:

Այնճարը բարեշեն բնակավայր է Լիբանանում՝ Բեքաա դաշտում, մայրաքաղաքից 50 կմ հեռու: Գյուղաքաղաքն ունի 2400 բնակչություն՝ բոլորը հայեր: 1939-ի վերջին՝ Ալեքսանդրիայի սանջակը Թուրքիային կցվելուց հետո, Մուսա լեռան շրջանի 6 հազարից ավելի հայությունը ֆրանսիական մանդատային իշխանության հովանավորությամբ փոխափոխվել է Լիբանան և հիմնել Այնճար գյուղը⁴¹: Բնական է միանգամայն ճիշտ է **հայալֆան** բառի գործածությունն Այնճարի համար: Օրինակ՝ «Զորեքշարթի, 7 Մարտի 2012-ի առաօտյուն, Դպրեվանքի Ընծայարանի բաժինն փախը սաներ... այցելեցին Այնճար **հայալան**» (www.nt.am):

Քեսաբ (արևմտ. Քեսապ) գյուղաքաղաքը Սիրիայի Լաթաքիայի նահանգում է, թուրք-սիրիական սահմանի մոտ: Նայերն այսօրվա հասարակվել են ԺԶ. դ., համայնքը վերջնականապես ձևավորվել է ԺԸ. դարում: 1911-ին ունեցել է 6100, 1915-ին՝ շուրջ 8000 հայ բնակիչ: Նրանք մեծապես փոխվել են 1909 թ. Կիլիկիայի կոտորածների ժամանակ, Մեծ եղեռնի փարիսերին քեսաբահայությունը փոխափոխվել է՝ փախվել շուրջ 5000 գոհ: Վերապրած հայերը 1918-ին բարենորոգել են իրենց ավանը: 1923-ին Քեսաբում ապրում էր շուրջ 3500, 2003-ին՝ 1500 հայ (1947-ին Նայասարան է գաղթել 2400, այլ փվյալներով՝ 3800 հոգի)⁴²:

Նայալֆան բառը հայաշունչ Քեսաբի կապակցությամբ գործածվում է անկախ այն հանգամանքից, որ բնակավայրն արդեն ամբողջությամբ հայ բնակչություն չունի: Այսպես. «Երեք փարիլ է վեր Սուրիոյ ապրած պարերազմական կացութիւնը՝ 21 Մարտի 2014-ին, ընդգրկեց երկրի ծովագերայ շրջանին մասին կազմող ՔԵՍԱԴ **հայալանը**» (www.supportsyrianarmenians.ca). «...բանակը

40 «Ի՞նչ խոսք: Ախր սա առաջին **հայ ալֆանն** է մեր ճանապարհին» (Զ. Դարյան, Քառուղիներ, գիրք 1, Երևան, 1981):

41 Նայալանն այժմ ունի 3 դպրոց և 3 եկեղեցի (առաքելական, կաթոլիկ և ավետարանական. «Նայ սիյուր» հանրագիտարան, էջ 295):

42 Տե՛ս անդ. էջ 517: Ունի 3 դպրոց և 3 եկեղեցի (առաքելական, ավետարանական և կաթոլիկ):

վերահասարակել է հսկողությունը Թուրքիայի հետ սահմանի Քեսաբ-**Նայսափան** հայկական բնակավայրում» (www.m.mediamax.am):

Ի դեպ, **հայսափան** բառը փակավիճակի արձանագրվել ոչ արեւմտահայերենի, ոչ էլ արեւելահայերենի բառարաններում⁴³:

Ներաբրբրական է, որ Քեսաբի համար գործածված ենք փեսնում նաև **հայսաբադար** բառը: Այսպես՝ «**Նայսաբադար** Քեսապի դեմ գործուած նախա-յարձակման ուղղակի եւ անուղղակի պարասխանատուութիւնները պէտք է որ ճշդուին» (Ն. Պալյան, www.horizonweekly.ca): Այս երևույթի մասին արդեն խոսել ենք, սա «հայաբնակ, հայաշար բնակավայր» նշանակության իրացումն է: Բառի **բադար** բաղադրիչը ճշգրիտ չի համապատասխանում «բադաբ» հասկացությանը, այլ ուղղակի նշանակում է «բնակավայր, գյուղաքաղաք կամ ավան»:

Կան **հայսափան** բառի նաև «անկանոն» գործածություններ: Այսպես, «Վանայ լիճի Ադրամար կղզիով ու Ս. Խաչ եկեղեցիով սկսած սահիկները շարունակուեցան՝ ներկաները հոգեպէս փոխադրելով դէպի Խարբերդ, Բալու, Տիգրանակերտ, Անի, Մեզիրէ, Սասուն եւ այլ **հայսառաններ**, որոնց փլաքակներն անգամ հայութիւն կը բուրեն» (www.aztagdaily.com): Նման ձեւակերպումից ենթադրվում է, թե Տիգրանակերտը կամ Անին **հայսափան** են: Պարզ է, որ գործ ունենք բառագործածության սխալի հետ:

Պարմականորեն «հայավան» հասկացությանը լիովին համապատասխանում է Ղրիմի Ս. Խաչ վանքից ոչ հեռու գտնվող Կազարաթ գույր հայկական բերդապահ ավանը (հիմնադրվել է ԺԴ դ.): Նայ իշխանների միջոցներով եւ հայ հրամանապարի գլխավորությամբ այսպիսի զինական մեծ ուժ ունեցող հայկական զորք է պահվել՝ Սուրխաթ եւ Կաֆա քաղաքի ուղիները թաթարական ասպարակություններից պաշտպանելու համար⁴⁴: Ավանում գործել են հայկական եկեղեցիներ, սրբոցիկներ եւ հայերեն ձեռագրեր: Ավերվել է թուրք-թաթարական ուժերի անընդհատ հարձակումների պարճառով (ամենայն հավանականությամբ՝ 1475-ին): Նրա մասին հետազոտում հիշարակություն չկա:

Այս ավանի մասին խոսելիս, սակայն, **հայսափան** բառը չեն գործածում: Բնական է, բառն ավելի ուշ է սրբոցիկվել, բայց հերմաբար անգամ Կազարաթի առնչությամբ **հայսափան**-ը չի կիրառվում: Այդ բառը փաստորեն վերաբերում է բացառապես մերձավորարևելյան հայկական ավաններին եւ գյուղաքաղաքներին,

43 Քննարկվող բառերից երկուսը գրանցվել են թարգմանական մի բառարանում՝ հայաբադար – армянский город, город, населенный армянами, հայաթաղ – армянский квартал («Նայ-ռուսերեն բառարան», Ե. Ն. Գալստյանի խմբագրությամբ, Երևան, 1987, էջ 387): Նայերեն բառերի դիմաց ռուսերենում բառակապակցություններ են:

44 Տե՛ս Վ. Ա. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 31, 33, 39:

ճիշտ ինչպես **հայաքաղաք**-ը՝ առավելաբար Տրանսիլվանիայի հայկական քաղաքներին:

Անդրադառնանք «հայ+բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարի հաջորդ միավորին: Այն ցարդ բննարկվածներից ավելի փոքր, ոչ քաղաքապիպ է և երկրագործությամբ ու անասնապահությամբ զբաղվող հայ բնակչություն ունեցող բնակավայր է նշանակում: Սպասելի է **հայազյուղ** բառը՝ իբրև բառակազմական կաղապարի փրամաբանական իրացում:

Տարօրինակ է, նույնիսկ անսպասելի, որ հայրենի բնաշխարհից, հայության բնօրրանից, հայրենիքից դուրս՝ օտար հողում, եղել են (տակավին նաև կան) գույր հայաբնակ գյուղեր: Դրանք գոյացել են Հայաստանից փառքեր դարաշրջաններում ծայր առած գաղթի, 1604-1605 թթ. պարսից շահ Աբաս Ա-ի կազմակերպած մեծ բռնագաղթի, ինչպես նաև 1894-1923 թթ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած ցեղասպանության հետևանքով: Ամբողջովին հայաբնակ գյուղեր կարելի է հիշել Պարսկաստանում, Սիրիայում, Ռուսաստանում, այլուր⁴⁵:

Հայազյուղ-ը բառարանային գրանցում չունի, ԱՐԵՎԱԿ-ում վկայություն չկա, գործածված չէ գաղթավայրերի մասին մեզ ծանոթ գիտական աշխարհություններում, որևէ արդյունք չենք ստանում նաև համացանցային որոնողական համակարգերում: Սակայն բառը գոյություն ունի (մասնավորապես արևմտահայերենում) և մամուլում հազվադեպ գործածվել է Սիրիայի փառքեր շրջանների հայաբնակ գյուղերի առնչությամբ: Այսպես. «Գաղթականները նախ կը փեղափորուին հիդաուաններու մէջ, ապա նոր բնակավայրերու մէջ: Դիւանական թողթերն ու փապգիր նիթերը գանոնք կը կոչեն նորաշէն գիւղեր, հայ գիւղեր, **հայազիւղեր** և հայաւաններ»⁴⁶:

Հայազյուղերը ձևավորվել են հերտզենյան շրջանում՝ 20-ական թվականներին, երբ Ալեքսանդրեպի սանջակը հանձնվել էր Սիրիային: Հիմնականում հայանուն այդ գյուղերը (Նորաշեն, Հայաշեն, Հայկաշեն, Մեարոպաշեն և այլն) մարել են. 1939-ին սանջակը Թուրքիային միացվելուց հետո բնակչության մի մասը փեղափոխվեց Հալեպ և այլ վայրեր, իսկ 1947-ին շարերը հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան (դրանցից մնացել է միայն Վազրֆ հայաբնակ գյուղը՝ այժմյան Թուրքիայի փարածքում):

45 Հմմտ., օրինակ՝ «Ամենէն հայաշար գառառը Փերիան է, որ առաջ 36 **հայ գիւղ** ունէր. բայց, քանի մը անգամ աւերուելով, հիմայ միայն գույր 16 **հայ գիւղ** ունի, մնացեալը պարսից հեպ իւառն: Անդիլթքի թեմն ունէր 13 եկեղեցի, մի քաղաքական և կրօնական ժողով. թեմի **հայ գիւղերն** էին՝ Պերիաս, Հաճի Հապիպլի, Եօղուն Օլուք, Բարբեյ, Վազրֆ, Քէպուսիէ, Քեսապ...» (Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 261, 415) և այլն: Բառաստեղծման **հայ գյուղ - հայազյուղ** ուղին բնական է և օրինաչափ:

46 Յ. Չոլաքեան, Սուրիահայ դպրոցներու պարամութիւն (անտիպ):

Իմաստարային-բառակազմական այս շարքի միավորներից է ՆԱՅԱԹ-ԱՂ «հայերի թաղ, հայաբնակ թաղ» հասարակ գոյականը (հայրուկ ենք շեշտում, քանի որ կա նաև համանուն հայրուկ անունը): Բառը գործածվել է այն բնակավայրերի կապակցությամբ, որոնք խառը (հայ եւ այլազգի) բնակչություն ունեին: Օրինակ՝ «Նայաթաղում բնակարան վարձեցի»⁴⁷: Նայաստանյան բնակավայրերի առնչությամբ բառի գործածությունը բնորոշ է:

Ունենք նաև ՆԱՅԹ-ԱՂ եւ ՆԱՅԱԹ-ԱՂ գյուղանուններ (տարբերությունը *ա* հոդակապն է): Սա զարմանալի չէ, քանի որ *թաղ*-ը հին հայերենում նշանակել է ոչ միայն «քաղաքի մի մասը», այլև «փոքրիկ գյուղ»⁴⁸: Աշխարհաբարում այս իմաստը կորսվել է, եւ բառը նշանակում է պարզապես «քաղաքի կամ գյուղի մի մասը՝ թաղամաս»:

ՆԱՅԹ-ԱՂ հայաբնակ գյուղը գտնվում էր Արեւմտյան Նայաստանի Բիթլիսի նահանգում, Մոսկովսկի գավառակում⁴⁹: ՆԱՅԱԹ-ԱՂ անունով երկու գյուղ է հայրնի. մեկը՝ Այրարատ աշխարհի Արագածոտն գավառում, մյուսը՝ Երևանի նահանգի Էջմիածնի գավառում⁵⁰ (այժմ ՆՆ Արմավիրի մարզում):

Նոր ժամանակներում է սրելով եւ բառարանային գրանցում ստացել ՆԱՅԱԹ-ԱՂ-ԴԱՎԻԹ «հայկական գաղութ»⁵¹ բառը՝ գոյականի արժեքով: Սա օտար

47 Սր. Մալխասեանց, Նայերեն բացատրական բառարան, հր. 3, էջ 36:

48 Ն. Գաբրիել Աւերիբեան, Խ. Խաչատուր Միրմէլեան, Խ. Մկրտիչ Ազերեան, Նոր բառ-գիրք Նայկագեան լեզուի, հր. Ա., Վենետիկ, 1836, էջ 793:

49 Ավերվել է 1915-ին, ինչպես հայկական հարյուրավոր այլ գյուղեր: Կազմվել է *հայկական՝ հայի թաղ* բառակապակցությունից՝ «հայկական/հայի (փոքրիկ) գյուղ» հասկացությունն արտահայտելու համար: Մոսկովսկի գավառակում ԺԹ. դ. վերջին եւ Ի. դ. սկզբին շուրջ 22.500 բնակչությունից հայեր էին 8000-ը, ուստի գյուղանվան առաջացումը պարճառաբանված է. շեշտվում է հայկականությունը՝ ի տարբերություն խառը բնակչություն ունեցող կամ այլազգիներով բնակեցված գյուղերի (Թ. Խ. Նակոբյան, Սր.Տ. Մելիք-Բախշյան, Ն. Խ. Բարսեղյան, Նայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հր. 3, Երևան, 1991, էջք 333, 868):

50 Այս գյուղանվան տարբերակներից են Այթախր, Այթաղ, Նայաթաղ: Սա նշանակում է, որ *թաղ* բաղադրիչը կարող է այլ կերպ տրուգարանվել, հարկապես որ գյուղի բնակիչները հայեր են եղել, եւ գյուղն այլազգիներով բնակեցված թաղամաս չունեիր: Չի բացառվում, որ այն Նայաթաղ կոչվեր (այսինքն՝ *թաղ*-ը գործածված լիներ բնականվան արժեքով)՝ ի տարբերություն հարևան թրքաբնակ գյուղերի, որոնք ժամանակին եղել են Արարատյան դաշտում (վերոհիշյալ Նայթաղի նման): Այժմ կոչվում է Նայթաղ («Նայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», էջ 328-329):

51 Բառի սրելոման հիմքը *հայ* (նաև *հայկական*) *գաղութ* բառակապակցությունն է: Հմմտ. «Նոր Դար» պարբերականից քաղված այս օրինակները. «Տեղական *հայ գաղութների* միջոցով Պետերբուրգում անկեղանոց է բացում գաղամեալ հայերի համար» (19.09.1901). «Լեհական հանրապետության բոլոր *հայ գաղութները* հպարակուեցան Բվովի արքեպիսկոպոսին» (05.09.1901). «Մեր փոքրաթիւ *հայ գաղութն* իր ազգային-հասարակական գործերում այս աստիճան նռանդուն ու անշահաւեր է...» (04.10.1901):

երկրներում հայկական բնակավայրերի վերնում քննարկված անվանումներից որոշակիորեն փառերը է: Նարկ է ուշադրություն դարձնել, որ **գաղութ** բառի իմաստներից մեկն այս է՝ «որևէ երկրի այն վայրը, որտեղ հաստատվել է բնակվում են գաղթականները, գաղթավայր»⁵²: Ուստի **հայագաղութ** բառը հայկական գաղթականություն ունեցող բնակավայրերն անվանում է ընդհանուր՝ չփառորոշված ձևով, իսկ ցարդ քննարկված բառերը՝ **հայաքաղաք**, **հայավան**, **հայաթաղ**, մասնավորում-հստակեցնում են նշված ընդհանուր իմաստը:

Հայագաղութ բառը գործածական է առավելաբար արևմտահայերենում, մեր օրերում եւս: Գործածվում է հիմնականում հրապարակախոսության մեջ, համացանցային կայքերում՝ լրատվության մեջ: Օրինակ՝ «Իրաքանչիւր **հայագաղութ**... պիտի իրագործէ 100-ամեակի նախաժրագրեալ իր հանդիսութիւնները» (www.keghart.com). «Տեղ մը նոր **հայագաղութ** կազմելու ու կազմակերպելու գործին նուիրուելով, ուրիշ փող գաղութային կեանքը աշխուժացնելու հեղափոխութիւն ըլլալով...» («Ազատ օր», Աթենք). «Մարթայեան լքեց օսմանեան բանակը ու ապաստանեցաւ Լիբանանի Զահլէ քաղաքը, ուր գտաւ փոքրաթիւ **հայագաղութ** մը...» («Գանձասար», Նալեյ). «Պոլիսը սփիւռք չէ, ոչ ալ **հայագաղութ**» (www.hetq.am):

Չնայած բազմաթիվ գործածություններին՝ **հայագաղութ**-ն արձանագրված չէ արևմտահայերենի բացարձակ բառարաններում, այլ միայն արևելահայերենի⁵³, թեպետ արևելահայերենին բնորոշ չէ: ԱՐԵՎԱԿ-ում, որն ընդգրկում է 110 միլիոն բառագործածություն, այս բառը, օրինակ, վկայվել է միայն մեկ անգամ. «Ֆրանսիայում էլ աշխարհի մյուս **հայագաղութ** երկրներում սրեղծվել են «Նոր Խարբերդ» կամ «Նոր Այնթափ» կոչվող միություններ» (Զ. Բալայան, «Օջախ»): Արևելահայերենում **հայագաղութ**-ի նման կիրառության փառածվելը խոսքիմասային երկփեղկման (գոյական/ածական) հիմք կարող է սրեղծել:

«Նայ + բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարի իրացումները՝ ՆԱՅԱԶԱՂԱԶ, ՆԱՅԱՎԱՆ, ՆԱՅԱԳՅՈՒՂ, ՆԱՅԱԹԱՂ, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ, պարմական բնույթ ունեն: Ներկայիս համաշխարհային, նաև համահայկական է հայաստանյան զարգացումները կարող են ազդել դրանց նշանակչալ իրողությունների վրա: Այդ փոփոխություններն իրենց հերթին հակադարձ ուժով կազդեն նշված բառերի, նրանց իմաստների, կիրառության էլ արժեքի վրա:

Ամփոփենք:

⁵² «Ժամանակակից հայոց լեզվի բացարձակ բառարան», հր. 1, Երևան, 1969, էջ 366:

⁵³ Տե՛ս Էդ. Բ. Աղայան, Արդի հայերենի բացարձակ բառարան, Երևան, 1976, էջ 810:

1. Տարբեր դարաշրջաններում հայրենիքից դուրս՝ փառքեր երկրներում (Ռուսիա, Ռուսաստան, Իրան, Լիբանան, Սիրիա և այլն), գաղթական հայերը զուր ևս բնակչությամբ բնակավայրեր են սրելով։ «Նայ + բնականուն (բնակավայրի անուն)» կաղապարով սրելոված ՆԱՅԱՔԱՂԱՔ, ՆԱՅԱՎԱՆ, ՆԱՅԱԳՅՈՒՂ, ՆԱՅԱԹԱՂ, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ բառերն առնչվում են հայոց պարմության նշանակալի երկու իրությունների՝ հայոց արտագաղթին (նաև բնագաղթին) և հայկական գաղթավայրերին։

2. ՆԱՅԱՔԱՂԱՔ, ՆԱՅԱՎԱՆ, ՆԱՅԱԳՅՈՒՂ, ՆԱՅԱԹԱՂ, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ բառերը և դրանցով արտահայտվող իրողությունները ոչ միայն հայ ժողովրդի պարմական ղեկավարին ճակատագրի վկայություններն են, այլև հայության կազմակերպվածության, նախաձեռնողականության, կարողունակության, միասնականության և դիմադրողականության հսկայական ցուցիչները։

3. Մի շարք դեպքերում հայաքաղաքները, հայավանները և հայագյուղերը հայանուն են, ինչպես՝ Նայաքաղաք, Նոր Նախիջևան, Նոր Զուղա, Նայաշեն, Նայկաշեն, Նորաշեն։ Առաջին հայաքաղաքի պարագայում «հայկական հերքն» առկա է փրկանական օտար համարվելու՝ Armenopolis:

4. Ժամանակագրորեն առաջինը ՆԱՅԱՔԱՂԱՔ-ն է (ԺԸ. դար)՝ պարսկական արգասիք։ Մնացածը ԺԹ.-Ի. դարերի կազմություններ են, սրելովել են գերագանգապես համաբանության հերքանքով։ ՆԱՅԱՔԱՂԱՔ և ՆԱՅԱԹԱՂ բառերը հանդես են գալիս հասարակ ու հարուկ հակադրությունների միջոցով։

5. ՆԱՅԱՔԱՂԱՔ, ՆԱՅԱՎԱՆ, ՆԱՅԱԳՅՈՒՂ, ՆԱՅԱԹԱՂ, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ բառերը, անկախ այն հանգամանքից, թե հայերենի ո՞ր փառքերակում են սրելովել կամ գործածության ի՞նչ հաճախականություն ունեն փառքերակներից մեկում, համահայերեն բնույթ ունեն։ ՆԱՅԱՔԱՂԱՔ-ը նորագույն ժամանակներում ակտիվացել է արևելահայերենում, մասնավորապես գիտական գրականության մեջ։

6. ՆԱՅԱՔԱՂԱՔ բառի իմաստային կառուցվածքում նկատվում են փոփոխություններ, որոնք «հայաքաղաք» ըմբռնման մեջ կարարվող փոփոխությունների հերքանք են, երբ այն նշանակում է ոչ միայն «զուր ևս բնակչությամբ քաղաք օտար երկրում», այլև «հայաբնակ քաղաք», «հայաշունչ քաղաք», «հայ բնակչություն ունեցող ավան, գյուղաքաղաք կամ թաղամաս», «հայկական քաղաք (հայրենիքում)»։

7. Բառարանային գրանցում ունեն ՆԱՅԱՔԱՂԱՔ, ՆԱՅԱԹԱՂ և ՆԱՅԱԳԱՂՈՒԹ բառերը, ՆԱՅԱՎԱՆ-ը և ՆԱՅԱԳՅՈՒՂ-ը՝ փակավին ոչ։ ՆԱՅԱՔԱՂԱՔ-ը՝ իբրև հայագիտական տերմին, պետք է ընդգրկվի հայկական հանրագիտարաններում։

8. Աշխարհում ընթացող փոփոխությունների թելադրանքով՝ հայությունը դարերի ընթացքում անդադար փեղաշարժվել է, փոխվել են նաև գաղթավայրերը: Այժմ հայաքաղաքը՝ իբրև իրականություն, գոյություն չունի: Նայականներից մեկը՝ Քեսաբը, խիստ վրանգված է: Սահմանափակ գոյություն ունեն հայազյուղը և հայաթաղը: Շարունակում է գոյություն ունենալ հայազաղություն՝ իբրև հայ ժողովրդի պարմական ճակարագրի դառը հերկանը:

РЕЗЮМЕ

В статье рассматривается семантико-словообразовательная группа, состоящая из пяти лексических единиц: ՆԱՅԱՔԱՂԱՔՐ “армянский город, город, населенный армянами”, ՆԱՅԱՎԱՆ “армянский поселок”, ՆԱՅԱԳՅՈՒՂ “армянская деревня”, ՆԱՅԱԹԱՂ “армянский квартал”, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ “армянская колония”, которые связаны со знаменательными реалиями истории армянского народа - эмиграцией и армянскими колониями.

В различные исторические периоды армяне, из-за невыносимых условий на родине, за ее пределами (в Румынии, России, Иране, Ливане, Сирии) основывали поселения с исключительно армянским населением. Изучаемые слова одновременно являются индикаторами организованности, инициативности, преуспеваемости, мощи и единства армян.

В хронологическом порядке первое место занимает слово ՆԱՅԱՔԱՂԱՔՐ, которое является лексико-семантической калькой (Armenopolis), остальные представляют собой самостоятельные образования, созданные по аналогии. Изучаемые слова имеют общеармянский характер, хотя их активность в восточноармянском и западноармянском вариантах различается.

SUMMARY

A word-building, semantic group consisting of five lexical units is being examined: ՆԱՅԱՔԱՂԱՔՐ “Armenian city, a city inhabited by Armenians”, ՆԱՅԱՎԱՆ “Armenian town”, ՆԱՅԱԳՅՈՒՂ “Armenian village”, ՆԱՅԱԹԱՂ “Armenian quarter”, ՆԱՅԱԳԱՂՈՒԹ “Armenian colony”, which are related to two important realias of the Armenian nation’s history: emigration and Armenian colonial states.

Throughout different historical periods residences exclusively inhabited by Armenians were formed outside of their motherland (Romania, Russia, Iran, Lebanon, Syria, etc), as an immediate result of intolerable conditions in their motherland. The studied words are also clear indicators of organization, initiation, competence, power and unity of Armenians.

In chronological order the first one is the word ՆԱՅԱԶԱՂԱԶ, which is a lexico-semantic translation loan (Armenopolis). The rest are independent forms created as a result of analogy. The studied words have general Armenian character though their activeness is different in Eastern and Western variants of the Armenian language.